

5719

Q-mq-ty
Gp4pnpq-

9(47-925)

p-31

fmgne
1910

W 150

Հրասարակ. Բ. Հ. Կուլտուրական Միութեան
Հրասարակցական Մասնաճիւղի—№ 13

ԳՐԱԳԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՑ

№ 2

Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА
Издательской секции, № 13

Очеркъ изъ армянской исторіи № 2

— ГАГИКЪ ВТОРОЙ —

Сочиненіе В. Папазяна.

Электропечатня газ. „БАКУ“.
БАКУ.

Գ Ա Գ Ի Կ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Գ Ր Ե Ց

Վ. Փ Ա Փ Ա Զ Ե Ա Ն

ԲԱԳՈՒԱՅ ՀԱՅՈՑ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
ՀԵՏԵԻԵԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. „Պատանեկան Գրադարան“ №№ 1—17
Իւրաքանչիւր գիրքը — ռ. 30 4.
2. Хрестоматія—Ս. Մանդիկեանի — „ 75 „
3. Դիւան հայոց պատմութեան—Գիւնս ա. ֆ.
Աղանեանի 4 „ — „
4. Բանաստեղծութիւններ — Յ. Յովնանեանի-
սեանի 1 „ 50 „
5. Վերք Հայաստանի—Խ. Արմաշեանի — „ 50 „
6. Վիլհելմ Տէլլ—Վ. Օստրոգորսկու — „ 5 „
7. Յրինի—Վ. Օստրոգորսկու — „ 5 „
8. Գործնական շերամապահութիւն—Կ. Մե-
լիֆ-Շանկազարեանի — „ 5 „
9. Բամբակի մշակութիւնը — Ն. Տարանիսի-
նովի (Թարգմանութիւն) — „ 3 „
10. Մանր վարկի հաստատութիւնները — „ 5 „
11. Բուսական աշխարհ—Կ. Մելիֆ-Շանկա-
զարեանի — „ 5 „
12. Արտաշէս երկրորդ (գրեալ հայոց պատ-
մութիւնից № 1)—Վ. Փափազեանի — „ 15 „
13. Голодъ—Ս. Չաւարեանի — „ 30 „
14. Կանոնադիր շտեմարան-գանձարանի—Ս.
Չաւարեանի — „ 2 „
15. Վարկատու ընկերութեան կանոնադրու-
թիւն (փոխադրութիւն) — „ 30 „

Հրատարակ. Բ. Հ. Կուլսուրաղեան Միութեան
Հրատարակչական Մասնաձիւղի—№ 13

ԴՐՈՒԳ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

9(47-925)

4-31

4.

№ 2

Գ Ա Գ Ի Կ

Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Գ Ր Ե Յ

Վ. Փ Ա Փ Ա Զ Ե Ա Ն

Բազու
Էլեկտրական տպարան „Բազու“
1910

4374

2003



3699-48

1.

Տասներորդ դարի վերջերում Հայաստանի քաղաքական կեանքը կնճռոտւել սկսեց:

Արաբական աւերիչ արշաւանքներն ու տիրապետութիւնը թուլացած լինելով, Աշոտ Բագրատունին կարողացել էր վերականգնել հայոց թագաւորութիւնը և երկիրը դնել փոքր ի շատէ լաւ վիճակի մէջ: Ժողովուրդը քիչ շունչ էր առել և ուրախութեամբ ողջունել իր նոր թագաւորին, յուսալով մոռանալ անցեալ մեծ վըշտերը:

Աշոտին յաջորդող Բագրատունի թագաւորները ջանացին ազդեցիկ բարձրութեան վրայ պահել կենտրոնական իշխանութիւնը: Աշոտ-Երկաթին պահ մի յաջողեց այդ, սակայն տասներորդ դարի սկզբներին նորից խարխուլել ըսկսեց պետութեան հիմքերը և անիշխանութիւնը ծայր առաւ երկրում:

Ծշմարիտ է, Հայաստանի աշխարհագրական դիրքը նպաստաւոր չէ եղել երբեք իշխանութիւնների կենտրոնացմանը, բայց դժբախտ օրե-

րում՝ ապակենտրոնացած իշխանութիւնները գոնէ դաշնակցել պիտի գիտենային, արտաքին փոթորիկների դէմը առնելու համար. փոթորիկներ, որոնց մռնչելու ձայնն արդէն դալիս էր Ասիայի խորքերից:

Տիրապետող դասակարգը սակայն չունեցաւ քաղաքական այդքան իմաստութիւն: Նախարարական իւրաքանչիւր ազդեցիկ տոհմ, ընդհակառակն, ձգտեց գերիշխանութեան, թագ դրաւ իր տոհմապետի գլխին և այդպիսով, տասներորդ դարի վերջերում, Հայաստանի նման մի փոքրիկ, թշնամիներով պաշարւած երկիր ունեցաւ 5--6 թագաւորութիւններ. իրար բզբաող, իրար դէմ դաւ լարող մանր պետութիւններ:

X դարի սկզբներում Վասպուրականն էր, որ ունեցաւ երկու թագաւորութիւն.—Արծրունեաց և Անձևացեաց:

X դարի երկրորդ կիսում Բագրատունեաց իշխանութիւնը բաժանեց երկու թագաւորութեան—Անիի և Կարսի:

Նոյն թաւականներին Սիւնիքը ունեցաւ իր անկախ թագաւորութիւնը, իսկ 988 թւին Լօռիում կազմեց Բագրատունեաց Կիւռիկեան պետութիւնը:

Ահա որդէն վեց թագաւորութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ունէր իր զօրքը, արքունիքը, կտրում էր դրամ, պատերազմ էր մղում

խնքնակամ... Ցաւն այն է, որ դրանցից իւրաքանչիւրը ոչ միայն դաշնակից չէր միւսներից որեւէ մէկին, այլ ամենքն էլ միմեանց թշնամի էին, իրար դաւում էին անընդհատ, իրար դէմ կռւի էին եղում, միմեանց հողերը աւերում... Իսկ եթէ ոյժները չէր պատում, չէին քաշում ռաար ազգի զօրք հրաւիրել, հրոսակներ բերել արտաքին թշնամիների մօտից և միմեանց ժողովուրդը կոտորել, թալանի մատնել...

Այդպէս էր երկրի դրութիւնը այդ դարերում: Մահամերձ մի հիւանդի էր նման նա, որին անգթօրէն ծւատում և յօշոտում էին թէ մօտ մարդիկ և թէ թշնամիները:

Իսկ թէ ովքեր էին որ ենթարկւում էին այդ բոլոր սոսկութիւններին, ովքեր էին, որ տանջւում էին, սպանւում ու թալանւում—դա շատ պարզ է:

Օհ՝ ոչ. իշխաններն ու կղերականութիւնը զոհ չէին տալիս: Իշխաններն ունէին դղեակներ ու ամրոցներ. շատ նեղն էլ որ ընկնում էին—ծախում էին կամ փոխում իրենց երկիրը օտարին, հաւաքում էին իրենց տունը, տեղն ու հարստութիւնը և գնում հեռու, աւելի ապահով երկիրներ: Կրօնաւորներն էլ նոյնն էին անում: Ամուր, բերդերի նման անառիկ վանքերի մէջ էին փախւում, և եթէ այդտեղից էլ հալածւէին—հաւաքում էին վանքերի հարստութիւնը և գը-

նում ուրիշ պետութեան հովանուն ապաստանում:

Զոհողը, ոտնատակ գնացողը, տանջւողն ու թալանւողը այն խեղճ ժողովուրդն էր, որ կպած էր հողին, որ կերակրում էր և՛ իշխաններին, և՛ կրօնաւորներին և որը սակայն, դժբախտութեան օրերում ոչ իշխաններից էր պաշտպանութիւն վայելում և ոչ էլ կրօնաւորներից:

Երևակայեցէք ուրեմն մի երկիր, որ անընդհատ ենթակայ է ներքին և արտաքին արշաւանքների, որ հրոսակների թալանի դէմն է միշտ ընկած և որ ոչ իր ցանածն է կարողանում հընձել, ոչ էլ գոնէ բնական բերքերը ժողովել:

Անշուշտ սովն ու հիւանդութիւնը այդպիսի երկրում կը գային սրբելու մնացած կեանքը, իսկ վարակիչ հիւանդութիւնները կը դառնային մշտական աղէտ:

Այո, սոսկալի է հայ ժողովրդի այդ դարերի պատմութիւնը: Միմեանց յաջորդող սովի, կոտորածի, թալանի, աւերածութեան և արեան հեղեղների նկարագրութիւններ են՝ անծայր, զարհուրելի, քստմնեցուցիչ պատկերներով...

2.

Այդ ամենը տեղի էր ունենում տասնամէկ-

երրորդ դարի սկզբներում, 1020 թւականից ըսկսած:

Գազիկ առաջին Բագրատունեաց թագաւորը մեռնելով, թողնում էր երկու որդի.—Յովհաննէս-Սմբատ և Աշոտ:

Օրէնքով գահը պիտի ժառանգէր անդրանիկը և կրտսերը տրանջալու ոչ մի իրաւունք չունէր. սակայն Յովհաննէս-Սմբատը ողորմելի, թուլամորթ, դանդաղ և անճարակ մարդ լինելով, Աշոտը մտածեց խլել նրանից Հայաստանի գահը:

Ճարպիկ, կրակոտ ու գրաւող երիտասարդ էր Աշոտը: Շատ շուտով կարողացաւ կողմնակիցներ գտնել, Վասպուրականի Սենեքերիմ թագաւորից էլ օգնական զօրք ստացաւ ու մի գեղեցիկ օր, առանց այլևայլութեան, գնաց և Անի մայրաքաղաքի առաջը կանգնեց:

Յովհաննէս-Սմբատը զօրք շատ ունէր, բայց թիւն օգուտ: Ի՞նքն էլ անշնորհ էր, բանակն էլ իր նման: Կուեցին, իրաւ է, բայց մի լաւ ջարդ կերան ու փախան, ցրիւ եկան:

Բռնը վատ վերջ կունենար, եթէ չը միջամտէին Պետրոս կաթողիկոսը և նախարարները: Բերին երկու եղբայրներին հաշտեցրին և երկիրը նրանց մէջ բաժանեցին: Յովհաննէս-Սմբատին մնաց Անին և շրջակայ երկիրները, իսկ Աշոտը վերցրեց Պարսկաստանին ու Վրաստանին կից եղած նահանգները:

Աշոտը դրանով էլ չը հանգստացաւ: Այնուհետեւ նա խեղճ եղբօրը հանգստութիւն չը տրուաւ. քանի անգամ բռնեց ու սպանել էր ուղղում, բայց Յովհաննէս-Սմբատը մի կերպ ազատուում էր:

Եւ մինչ երկու եղբայրները այդպէս կռուում էին իրար հետ—հեռուից սկսած՝ վրայ էր գալիս մի զարհուրելի փոթորիկ:

Սելջուկ թաթարներն էին դրանք. վայրենի մի բազմութիւն, որ իրենց Տուղրիլ-բէգի առաջնորդութեամբ, մորեխների նման Հայաստան թափւեցին ու անցած տեղերը անապատ դարձրին:

Ել ոչինչ չէր մնում այնտեղ, ուր նրանք ոտք էին կոխում: Աւերակ, մոխրակոյտ, դիակ —դրանք էին նրանց թողած յիշատակները:

Առաջին նահանգը, որ նրանք ամայացրին —Վասպուրականը եղաւ: Սենեքերիմ թագաւորը փորձեց դիմադրել, բայց չնչին թումբը ինչ կարող էր անել հեղեղի առաջ, որ հողի հետ հաւասարացրեց ամեն ինչ և անցաւ:

Տուղրիլ-բէգը սակայն աւելի հեռու չը գընաց դէպի Հայաստան: Նրա միտքը ուրիշ էր. դեռ իրա համար պետութիւն էր ուղղում ստեղծել մի տեղ. աչքը Պարսկաստանի վրայ էր:

Այդպէս էլ արաւ. քչեց ու գնաց Պարսկաստան, նւաճեց նրան և հիմնեց թաթարական այն պետութիւնը, որ ապագայում արիւնի ծով պիտի դարձնէր Հայաստանը:

Այդ շատ լաւ զգացին հայ իշխանները: Վրտանգաւոր դրացին հանգստութիւն չէր տալու, իրենք էլ կաղմակերպելու և սպառնալից հեղեղի առաջը թումբեր կառուցանելու ոչ խելք ունէին և ոչ էլ ընդունակութիւն: Աւելի շուտ՝ ամենքը իրենց ընտանիքը, իրենց անձն ու հաստութիւնը ապահովել մտածեցին:

Առաջինը հէնց Վասպուրականի Սենեքերիմ թագաւորն եղաւ, որ սովորեցրեց միւս թագաւորներին ու ազնւականներին, թէ ինչ պէտք էր անել:

Ինչ փոյթ ժողովուրդը. բաւական էր որ իրենք ապահով կեանք ունենային. թող այդ կեանքը լինէր նոյն իսկ օտար հողի վրայ:

Եւ Սենեքերիմ արքան առաջարկեց յոյներին՝ Վասպուրականը ծախել նրանց, փոխարէն մի նահանգ առնելով Յունաստանում:

Յոյները մեծ հաճութեամբ ընդունեցին առաջարկը: Վաղո՛ւց նրանք ճգնում էին տիրել Հայաստանին. այս կարեւոր ու բարեբեր նահանգի տիրապետութիւնը ուրախացրեց նրանց:

Վասիլ կայսրն էր այդ ժամանակ: Նա անմիջապէս Սենեքերիմին տուաւ Սեբաստիան և գործակալներ ուղարկեց տիրելու Վասպուրականին:

Սենեքերիմը հաւաքեց տունն ու տեղը, բոլոր ունեցածը և գնաց հանգիստ ապրելու: Իսկ

Թէ յոյները ինչպէս կը վարւէին ժողովրդի հետ
—այդ նրա փոյթն անգամ չեղաւ:

3.

Վասիլ կայսրը տիրելով Վասպուրականին,
մտածեց իրագործել ամբողջ Հայաստանը յունա-
կան մի կուսակալութիւն դարձնելու ծրագիրը:

Ասիսագնների թագաւոր Գեօրգին այդ ժա-
մանակ լինելով հարկատու յոյներին, ըմբոստա-
ցաւ և կամեցաւ անկախութիւն յայտարարել:
Հայոց թագաւոր Յովհաննէս-Սմբատը ծածկա-
բար՝ զօրքով օգնեց նրան:

Վասիլ կայսրը յարմար առիթ համարեց մի
անգամով երկու որս խփելու և մեծ զօրքով քայ-
լեց Գեօրգիի վրայ, նւաճեց նրան, հնազանդա-
ցրեց, ապա դարձաւ ու բանակեց Հայաստանի
սահմանների մօտ:

Յովհաննէս-Սմբատը վախից կորցրեց իրեն:
Կուելու ոյժ և ընդունակութիւն չը կար, իսկ
կայսրը ընծաներով շլացողը չէր:

Սենեքերիմի օրինակն առաջն էր: Է՛հ, շատ
մէկ պէտքն էր երկիրը. ինքը ողջ լինէր, թէ չէ՝
Հայաստանը ի՞նչ արժէք ունէր:

Ու որոշեց Անի քաղաքը իր մահւանից յե-
տոյ կայսրին նւիրաբերելու խոստումն անել և
այդպիսով ազատուել վերահաս վտանգից:

Ժամանակակից Պետրոս կաթողիկոսը ոչ
միայն դէմ չը կացաւ դրան, այլև քաջալերեց
այդ միտքը: Մի քանի իշխաններ նոյնպէս գտան,
որ վատ միտք չէր այդ և որ հարկաւոր էր ա-
պահովեցնել իրենց անձը նոյն կերպով:

Որոշումը տրւեց: Պատրաստեցին մի խոստ-
մագիր—մուրհակ (յետկար). Պետրոս կաթողի-
կոսը անձամբ տարաւ յանձնեց կայսրին և ար-
ժանացաւ նրա ողորմած շնորհակալութեանն ու
առատ ընծաներին:

Ասում են որ այդտեղ, որովհետև ջրօրհնէ-
քի տօներն էին—կայսրի ներկայութեամբ Պե-
տրոս կաթողիկոսը մի հրաշք գործեց: Զուրը օրհ-
նելիս գետը կանգ առաւ և ետ դարձաւ: Կա-
թողիկոսի անունը միայն այնուհետև «Գետա-
դարձ»:

Բայց եթէ յիրաւի դաւաճանները կարող են
հրաշագործ համարուել, ապա ուրեմն պիտի հա-
ւատաւ Պետրոս կաթողիկոսի այդ հրաշքին:

Այսպէս թէ այնպէս, Անին սեփականաց-
նելու թուղթը ծոցում՝ կայսրը հեռացաւ Հա-
յաստանից և հանգիստ թողեց նրա խղճալի թա-
գաւորին, կաթողիկոսին և իշխաններին:

Այնուհետև ահա թէ ինչեր կատարւեցին.—
Վասիլ կայսրը Յովհաննէս-Սմբատից շուտ մե-
ռաւ: Յաջորդը Կոստանդին կայսրն էր: Սա էլ
երկար չապրեց, սակայն մեռնելուց առաջ մտա-

ծեց դարմանել իր նախորդի անարդարութիւնը:

Մահւան անկողնի մէջ՝ խորհրդածեց որ կատարեալ անիրաւութիւն կը լինէր մի ամբողջ երկիր խլել ու սեփականացնել, որովհետեւ նրա թագաւորն ու իշխանները եղել էին անճարակներ:

Հրամայեց գտնել իսկոյն մի հայ մարդ և բերել իր մօտ: Որոշեց մի անգամ ընդ միշտ ապահովացնել հայերին և Յովհաննէս-Սմբատի թուղթը վերադարձնել իրեն:

Տարօրինակն այն է, որ այդ ժամանակ Կ. Պօլիս էր գտնուում Պետրոսի կաթողիկոսական հիւրընկալը, մի ոմն Կիրակոս քահանայ: Թէ ինչո՞ւ էր եկել—յայտնի չէ, բայց նրան էր որ բերին հիւանդ կայսրի մօտ:

Կայսրը տաւ նրան Անիին վերաբերեալ թուղթը և ասաց.

— Տօ՛ր այդ գիրը և տո՛ւր հայոց թագաւորին: Տուր և ասա, թէ որովհետեւ բոլոր հողածինների նման՝ ինձ էլ մահւան հրաւերը եկաւ, ետ առ քո գիրը և քո թագաւորութիւնը տուր որդուդ, որդիդ էլ իրա՛ որդուն՝ մինչև յաւիտեան:

Քահանան առաւ թուղթը և երգեց կատարել կայսրի կամքը:

Բայց կատարեց արդեօք: Չը մտածեց անդամ այդ մասին: Հանգիստ սրտով թուղթը իբր մօտ պահեց, մինչև որ յունական գահի վրայ նստեց Միխայէլ Ե. կայսրը:

Երբ նոր կայսրը արդէն օծւել էր, քահանան տարաւ թուղթը և մեծ գումարով ծախեց նրան...

— Ո՛հ այն ցաւալի, դռն առևտուրը—բացազանչում է պատմագիրներից մէկը¹⁾—որքան արիւնի պարտական դարձրեց նա իր անձը, քանի գաւառներ անմարդաբնակ, ամայի դարձան, քանի մեծագիր մայրաքաղաքներ դատարկւեցին իրենց բնակիչներից...

4.

Յովհաննէս-Սմբատը, —ինչպէս ինքը ամեն միջոց գործ դնելով ձգտել էր — հանգստութեամբ մեռաւ 1041 թւականին:

Անժառանգ էր, իրենից քիչ առաջ մեռել էր եղբայր Աշոտը և թողել մի 14 տարեկան որդի: Հայաստանի թագաւորութեան գահը, ըստ օրինի, նրան էր պատկանում:

Սակայն, երկու տարի դեռ ևս այդ գահը մրնաց թափուր: Պատճառը՝ սովորական երևոյթն էր: Նախարարական տոհմերը միշտ այդպիսի առիթների էին սպասում՝ իրենց փառասիրութեանը գոհացում տալու համար:

Այս անգամ էլ այդպէս եղաւ: Սիւնեաց իշ-

¹⁾ Արիստակէս Լաստիվերցին:

խան Վեստ Սարգիսը, որ Յովհաննէս-Սմբատի մահաւանից յետոյ պետութեան խնամակալ էր կարգւել, օգտուեց իր դիրքից, հաւաքեց ինչ որ կար արքունի գանձարանում և բոլորն էլ տարաւ թաղցրեց Սիւնեաց աշխարհի իր մի ամրոցի մէջ: Յետոյ կողմնակիցներ գտաւ, կազմեց իր համար նոր զօրք, տիրեց շատ գաւառների, եկաւ մտաւ Անի և մտածեց հռչակել իրեն հայոց թագաւոր:

Սակայն իսկոյն և եթ դէմ ընկաւ խոչընդոտի: Ենթադրում էր, թէ որպէս խնամակալ պետութեան, նախարարներին և ժողովրդին կարող էր հնազանդեցնել: Բայց մոռացել էր մի զօրեղ հակառակորդի—իր տոհմի չափ և աւելի գուցէ ազդեցիկ մի նախարարութեան, որի ազգապետ Վահրամ Պահլաւունու ձեռքի տակն էր գտնւում ամբողջ բանակը:

Գործերի այգալիսի դրութեան մէջ, Հայաստան հասաւ յունաց Միքայել կայսրից մի պատգամաւորութիւն և յիշեցնելով Յովհաննէս—Սմբատի ընծան, պահանջեց Անին:

Հայերը մերժելով մերժեցին կայսրի պահանջը: Ո՛չ մի սպառնալիք, ո՛չ մի յորդոր լսել չը կամեցան: Հէշտ էր օտարին տալ այնպէս բազմամարդ և շքեղ քաղաքը, երկրի սիրտը, գրէթէ ամբողջ երկիրը:

Յովհաննէս-Սմբատին յորդորող մարդիկ ըստիպւած եղան լռել՝ զօրքի և ժողովրդեան վեր-

դովումը տեսնելով: Պետրոս կաթողիկոսը նոյնպէս, ձկուն՝ որպէս ամեն դաւաճան, ինքն իրեն կողմնակից ցոյց տաւ Անին չը յանձնելուն:

Կայսրը բարկացած՝ բանակ հանեց դէպի Հայաստան: Պատերազմողներ չէին դրանք, այլ հրոսակների գնդեր, որոնք ասպատակ էին սրփռում դէպի գաւառները, թալանում էին, այրում, ոչնչացնում և նորից իրենց տեղը վերադառնում:

Եւ որովհետեւ ոչ ոք չը կար որ դիմադրէր ու պատժէր նրանց, զինւոր անուն կրող այդ աւազակները կրկին եկան, երրորդ անգամն էլ ներս մտան, իսկ չորրորդին արդէն համարձակ առաջ դիմեցին, անցան Շիրակ գաւառը և գնացին պաշարելու մայրաքաղաքը:

Վեստ Սարգիսը անմասն չէր յոյների գալու մէջ: Նա յոյս ունէր նրանցով ջլատել Պահլաւունիներին և միւս դիմադիր նախարարների ոյժը, մտածում էր սիրելի դառնալ կայսրին և նրա հովանաւորութեան տակ՝ լինել հայոց թագաւոր:

Բայց նախարարական ցեղերը կատաղի՝ ոտքի ելան, երբ տեսան որ յոյն զօրքը գրաւել էր նրանց կալածներն էլ և սպառնում էր լիովին ոչնչացնելու ամենքին:

Գոյութեան հարց էր: Թշնամին ջնջում էր և չէր ձանաչում ո՛չ մի արտօնութիւն, ո՛չ մի ազնւականութեան իրաւասութիւն:

Եւ անա բոլորն էլ, նրանց հետ և՛ կրօնա-
ւորութիւնը, և՛ ժողովուրդը՝ միահամուռ գնա-
ցին զօրքերի հրամանատարի—Վահրամ Պահլա-
ւունու մօտ, որ գտնուում էր Անիի միջնաբեր-
դում:

Ծերունի նախարարը ուրախացաւ, անմիջա-
պէս զօրաժողով կազմեց և մինչդեռ յոյները
պաշարման համար մեքենաներ և ուրիշ բաներ
էին սարքում—զարմանալի աշխուժութեամբ բա-
նակը երեք մասի բաժանեց, Ծաղկոց կոչւող
դռնից դուրս սլացաւ և ընկաւ յոյների վրայ:

Յարձակումը այնքան անակընկալ և այնքան
ուժեղ եղաւ, որ յոյն բանակը փշրւեց խեցիի
նման, կտոր-կտոր եղաւ և ցրիւ եկաւ ամեն ուղ-
ղութեամբ:

Օհ, ինչպիսի կոտորած էր այն: Յոյներից
հիշ ոք կուել չը զօրեց: Կրունկները դարձրին ու
սկսեցին փախչել. շատերը շարած՝ գետն էին
ձգում իրենց և Ախուրեանը արիւն էր կտրել:

Վահրամ Պահլաւունին տեսնելով այդ, ստիպ-
ւեց միջամտել և մեծ յորդորներով հայ կուռղ-
ներին հտ կացնել անօգուտ արիւնհեղութիւ-
նից:

Այնուհետև մի առ ժամանակ Անին պահան-
ջող չեղաւ յոյների կողմից, բայց ներքին երկ-
պառակութիւնները վերջ չունեցան:

Վեստ Սարգիսը չը կարողանալով օգտուել
յոյների գալուց, գործունէութեան ձևը փոխեց և
սկսեց ստորերկրեայ միջոցներով շարժւել: Գրա-
ւելու ձեռնարկեց հայ նախարարներին, կաշա-
ռեց, խոստումներով շացրեց և յորդորեց որ
իրեն թագաւոր հռչակեն:

Յոյներից իսկոյն յետոյ, օգտուելով անիշխա-
նութիւնից, Աղւանաց իշխան Դաւիթ Անհողին,
որ Յովհաննէս-Սմբատի հօրեղբօր որդին էր,
զօրք հաւաքեց ու Հայաստան մտաւ: Նա էլ էր
ցանկանում հայոց թագաւոր դառնալ:


Վահրամ Պահլաւունին ստիպւեց նրա դէմ ևս
դուրս գնալ: Կէս կուով և կէս համոզելով՝ կա-
րելի եղաւ փառամօլ իշխանին ետ դարձնել իր
տեղը:

Եւ այսպէս, վերջ չէր լինում այլևս ոտնա-
ձգութիւնների, երկպառակութիւնների: Երկրից
վերացել էր ամեն վստահութիւն: Մատնութիւնն
ու լրտեսութիւնը, դաւադրութիւնն ու դաւաճա-
նութիւնը սովորական երևոյթներ էին դառնում,
իսկ Վեստ-Սարգսի սխրագործութիւնները անց-
նում էին ամեն չափ ու սահման:

5.

Երկու տարի ամբողջ Հայաստանը մնաց այդ-
պէս անիշխան և խաղալիք ներքին երկպառա-
կութիւնների, նախարարական տոհմերի ոտնա-

3699-48



ձգութիւնների, այլև Արևելքից ու Արևմուտքից սպասուող սպառնալից փոթորիկների:

Տուրքիւ-բէզը Պարսկաստանում թէև դեռ լուռ էր, բայց ակներև կերպով մեծ պատրաստութիւններ էր տեսնում հեղեղելու փոքր-Ասիան՝ ծայրից-ծայր: Արևմտեան կողմը, Յունաստանի կողմից եթէ դեռ չէին նորոգում Հայաստանը յանձնելու պահանջը և եթէ առ այժմ հանգիստ էին թողնում հայերին—պատճառը իրենց ներքին քաղաքական հանգամանքներն էին:

Միքայէլ կայսրին յաջորդել էր Միքայէլ V Կալաֆատ կոչւածը, որ հազիւ հինգ ամիս թագաւորեց և գահը թողեց Կոստանդին Մոնոմախին: Սա էլ առ այժմ ամրացնում էր իր տեղը, ծանօթանում էր պետական գործերի հետ և լինելով շրջահայեաց, լուրջ մարդ, զգում էր ապագայ արևելեան արշաւանքների գալուստը և պատրաստում էր նրանց դէմ:

Գործերի աշգլիսի դրութեան մէջ՝ հայ նախարարներն էլ ապագայի առաջ դողահար մնում էին և չը գիտէին ինչ անել: Լաւ զգում էին, որ Տուրքիւի արշաւանքներին իբր պատւար են հանդիսանալու. իրենք և որ վայրագ յարձակումների առաջին թափը գարնւելու էր Հայաստանին:

Պէտք էր մի հնարք գտնել պատւարը ամրացնելու, եթէ չէին կամենում որ ամէն ինչ

շնչէր յաւիտենապէս:

Այդ բոլորը խորհելու, այլև միջոցներ գտնելու նպատակով՝ հայ գլխաւոր իշխանները ծածուկ լուր տւին իրար և մի գիշեր ժողովեցին կաթողիկոսի մօտ:

Վեստ-Սարգսի մտքից անգամ չէր կարող անցնել, որ կաթողիկոսը դէմ կը գնար յոյներին և Վեստ-Սարգսին. չէ՞ որ նա էր Ասին յանձնելու գլխաւոր խորհրդատուն և միջնորդը:

Սակայն ժողովը տեղի ունեցաւ թագուն: Երկար խորհրդակցութիւնից յետոյ, բոլոր նախարարները այն եզրակացութեան եկան, որ հարկաւոր էր ունենալ մի թագաւոր:

Այս որոշման հետևանքը այն եղաւ, որ վճռեցին Հայաստանի գահի վրայ նստեցնել Բագրատունեաց թագաւորութեան միակ օրինաւոր ժառանգ՝ պատանի Գագիկին:

Գագիկին ճանաչողներ կային և այնքան գովեստով խօսեցին նրա արժանիքների մասին, որ ամենքը շունչ առին և յոյս յայտնեցին թէ վերջապէս երկիրը պիտի խաղաղէր, թշնամիները զսպւած մնային և Բագրատունեաց իշխանութիւնը մի նոր թափով յառաջադիմէր:

Գագիկը, յիշաւի—ասում է պատմութիւնը—մի վայելչակազմ, գեղեցիկ, քաջ և ուժեղ պատանի էր, որ մանուկ հասակից կրթւել էր գիտութիւնների մէջ, սովորել էր յոյն ուսուցչի

մօտ, բարեպաշտ էր ու վեհանձն:

Աւելին չէին ուզում. և եթէ նախարարները նրա հետ միաբան մնային միշտ, հաւանական է, որ կարողանար նա Հայաստանի անկախութիւնը երկար պահպանել:

Այսպէս, երբ վճուեց նրան գահ նստեցնել, մի քանի իշխաններ յանձն առին դուրս գնալ քաղաքից և ծածուկ, մի հնարքով ներս մտցնել Գագիկին: Վախենում էին Վեստ-Սարգսից և գիտէին որ ամեն քայլում հսկում էին նրա լրտեսները:

Մտադրութիւնը յաջողեց: Գագիկին, որ թագնւել էր հեռու մի տեղ, գտան ու ծպտեցրած՝ մտցրին մայրաքաղաք: Իսկոյն կաթողիկոսը և նախարարները իջեցրին նրան Մայրեկեղեցին և օծեցին հայոց թագաւոր:

Այդ լուրը կայծակի նման ընկաւ Վեստ-Սարգսի վրայ: Կատաղեց, այս-այն կողմն ընկաւ, բայց արդէն ուշ էր, զօրքն ու ժողովուրդը մեծ հրճանքով ողջունում էր նոր թագաւորին:

Յուսահատ, երկիւղով լի իր անձի համար, Սարգիսը ժողովեց իր համախոհներին և գնաց ամրացաւ Ներքնաբերդում:

Մինչ այդ, դրսում նոր թագաւորը իր հանդիսաւոր ելքն էր կատարում մայրաքաղաքի մէջ, ընդունում էր իշխանների և զօրքի երդու-

մը, շրջում էր փողոցները և նրան նայող դէմքերը պարզում էին, նրա սիրալիր վարմունքը գրաւում էր ամենքին:

Երկրորդ օրն իսկ Գագիկը ապացոյց տւաւ, որ ոչ միայն քաջ էր, այլև յանդուգն ու պաշարուն:

Մեն-մենակ—տեսան նրան ամենքը—գնաց դէպի միջնաբերդ, կանգնեց դռան առաջը և կանչեց պահակին:

— Դու, զինւոր, գնա, ասա տիրոջը, որ հայոց թագաւոր Գագիկը եկել է իր միջնաբերդում նստող իշխան Սարգսի մօտ և ուզում է տեսնել նրան երես առ երես, առանց թշնամութեան:

Այս ապշեցուցիչ վարմունքը այնպէս յանկարծակիի բերաւ և այնպէս խոր ազդեց Սարգսի վրայ, որ նա դուրս եկաւ թագաւորի առաջ և թագաւորավայել յարգանքներով ներս ընդունեց:

Չէր անցել մի ժամ, որ դռները նորից բացւեցին և Վեստ-Սարգիսը գլխիկոր դուրս էր գալիս իր համախոհների հետ ու հեռանում Անիից:

Պէտք էր տեսնել այդտեղ՝ ժողովրդի հըրճանքը, նախարարների զարմանքը և հիացումը: Ի՜նչ, այն վայրագ, գազանաբարոյ մարդը, որ այնքան արիւնի, այնքան զոհերի միջից քայլում էր դէպի գահը—այժմ ձեռնթափ եղած,

զինաթափ մի պատանու առաջ՝ թողնում փախչում էր...

Հրաշքի նման բան էր այդ, բայց կատարել էր, փաստ էր:

Ճշմարիտ է, Վեստ-Սարգիսը այնուհետև էլի չը հանգստացաւ, գնաց Սուրմառուի բերդաքաղաքը մտաւ, մտածում էր յոյներին դարձեալ մատնել երկիրը, շարժել նրանց իր ազգակիցների վրայ—բայց այդտեղ էլ վրայ հասաւ Գազիկը և այս անգամ նրան յաջողեց զրկել Սարգսին՝ յայտնի դաւադրութիւններ սարքելու միջոցներից:

Առաւ իր հետ մի խումբ քաջ մարդիկ և ուղղակի գնաց Վեստ Սարգսի բանակը: Այնտեղ նա հրամայական շարժումներով անցաւ պահակներից ու մտաւ հրամանատարի վրանը:

Սարգիսը սառած մնաց՝ տեսնելով նրան իր առաջը:

— Դու չը կատարեցիր խոստումդ, իշխան Սարգիս, և ահա քո թագաւորը եկել է կալանաւորելու քեզ:

Նւ կապել տւաւ նրան՝ նոյն իսկ իր պահակների ձեռքով ու բերաւ Անի:

Այնտեղ Սարգիսը քիչ բանտ նստեց, սակայն իր կեղծաւորութեամբ, և խոնարհ, շողոքորթ լեզուի շնորհիւ՝ յաջողեց ոչ միայն ազատել, այլև մեծ պաշտօնի տէր դառնալ ու մնալ

թագաւորին մօտ անձնաւորութիւն:

Այդպէս էր ահա, որ սկսեց իր թագաւորութիւնը Գազիկ երկրորդ Բագրատունին, Քրիստոսի 1042 թւականին:

6.

Այնքան լաւ սկսեց երիտասարդ թագաւորը իր գործունէութիւնը, որ սիրելի ու համակրելի դարձաւ բոլոր դասակարգերին:

Աշխոյժ, յանդուգն և ճարպիկ, նոր թագաւորը կտրուկ հարւածներով և արագաշարժ յարձակումներով ահաբեկեց բոլոր ապստամբներին և երկպառակութեան պատրաստ իշխաններին, նորից ետ վերցրեց յոյների գրաւած գաւառները և ամբողջ Հայաստանը նւաճելուց ու մաքրելուց յետոյ, յաղթանակով վերադարձաւ մայրաքաղաք:

Սկսեցին լաւ օրեր: Ժողովուրդը յոյս առած՝ ձեռնարկեց նորից ցանել-հնձելու, առևտրի. կարաւանների շարքերը զարթաւին՝ երևացին մեծ ճանապարհների վրայ, անցուղարձը վերականգնում էր, ապահովութիւնը վերահաստատւում:

Մի քանի տարի ևս—և անշուշտ երկիրը պիտի սկսէր ապրել իր վաղուց երազած բարօր կեանքով...

Բայց քաղաքական միջնորդը չափազանց մռայլ էր, հանգամանքները բարդեւել էին և այդպէս հեշտութեամբ չէր, որ խաղաղութիւնը պիտի տիրէր փոքր-Ստիսյուն:

Յիրաւի, չէ՞ որ յոյները կային արևմուտքում՝ իրենց յաւակնոտ ձգտումներով և իրենց քաղաքականութեամբ՝ պատնէշ շինելու Հայաստանը Տուղրիլի դէմ: Իսկ Տուղրիլը, չէ՞ որ նա տենդային եռանդով ստւարացնում էր իր բանակը. ապա Կովկասեան լեռներից իջնող վայրենի խմբերը, նոյն իսկ իրեն—Հայաստանի սրտում, հայրենիքի դէմ դաւադրող մանր ու մեծ փառամօլ թագաւորներն ու իշխանները...

Ապա Վեստ-Սարգիլը, Կարելի՞ էր հաւատալ, որ նա հաշուել էր իր դրութեան, հաշուել՝ հայոց զահը ուրիշին թողնելու մտքի հետ: Չէ՞ որ նա դադանապէս միշտ յարաբերութեան մէջ էր յոյների հետ, միշտ զրգուում էր նրանց և յորդորում գալ Անին պահանջելու:

Կոստանտին Մոնոմախը, ասենք, զբաղւած էր: Միջագետքում ապստամբութիւն կար՝ զսպել էր պէտք: Մի ամբողջ տարի Գագիկը ոչ մի լուր չուներ հաւաքուած նրա կողմից:

Անշուշտ, երիտասարդ թագաւորը գուցէ և կարողանար նոյն իսկ Մոնոմախին դէմ դնելու միջոցները ձեռք բերել, եթէ նրան հանգիստ թողնէին:

Բայց այդ վիճակած չէր ոչ երկրին և ոչ էլ նրան: Երկրորդ տարին իսկ ստիպւած եղաւ նորից զօրք ժողովել, զէնք ձեռք առնել և զնալ կուելու այն հրոսակախմբերի դէմ, որոնք Թուրքաստանի սահմաններից անհամար բազմութիւնով նախ Մարաց երկիրն էին մտնել, յետոյ Հայաստանի Նիգ դաւառն էին աւերել և այժմ Հուրաստան¹⁾ գետի մօտն եկած՝ սպառնում էին Գրիգոր Պահլաւունու Բջնի բերդին:

Պէտք էր քշել նրանց, քանի դեռ աւելի առաջ չէին անցել: Գագիկը առաւ իր հետ Գրիգոր Պահլաւունուն և քայլեց այդ սկիւթացի ցեղերի դէմ:

Այստեղ էր, որ թագաւորը մեծ յաջողութեամբ գործադրեց պատերազմական այն ձևը, որ հին աշխարհում յայտնի էր որպէս բուն-հայկական պատերազմական ձև:

Վեց հազար հոգի դարանի դրեց գետից քիչ հեռու, ինքը տաս հազարով մօտեցաւ ջրերին ու կուի սկսեց միւս ափի վրայ բռնակած սկիւթացոց հետ:

Կուի տաք տեղում, յանկարծ, թագաւորի մի հրամանի վրայ, հայ զօրքը մէջքը դարձրեց և սկսեց ետ գնալ: Սկիւթացիները մտածելով որ հայերը փախնում էին, անցան գետը և խառն ի խուռն վազեցին նրանց ետևից:

1) Հրազդան (Զանգու) գետը:

Յանկարծ դարանի մտած գնդերը դուրս
նետաւելով՝ փակեցին սկիւթացոյ ետևի կողմը,
իսկ փախչողները մէկէն դարձան ու փակեցին
առաջի կողմից:

Շփոթեալ, խելքները կորցրած՝ աւազակնե-
րի մեծ մասը ընկան կամ սրերից սպանւած և
կամ գետի մէջ խեղտւելով: Մնացածներն էլ
անցան գետը, այնտեղ եղածներին էլ սարսա-
փեցրին, թողին ինչ ունէին՝ չունէին և դուրս
փախան Հայաստանից:

Շատ գերիներով ու աւարով Գագիկը ետ
դարձաւ մայրաքաղաք և ընդհանուր ցնծութեան
մէջ չը մոռացաւ իր բանակի հանգստութեան,
մեծութեան և կարգաւորութեան մասին հոգալ
խնամքով:

Ո՛չ միայն զօրքը չարձակեց, այլ մինչև ան-
գամ չը թողեց որ զէնքերը ցած դնեն: Ամենու-
րեայ կրթութիւն, պաշարի պատրաստութիւն,
տենդոտ փութկոտութիւնով բերդերի ամրացնե-
լը՝ դարձան նրա մշտական զբաղումների առար-
կան:

Վաղ թէ ուշ—զգու՛մ էր նա—թէ արևելքից
և թէ մանաւանդ յոյների կողմից՝ պիտի փլէին
հեղեղները և ողողելու երէկին կատաղի հոսանք-
ներով: Վաղ թէ ուշ՝ անհրաժեշտ էր պատրաստ
լինել հարձակներին դիմադրաւելու համար:

7.

Եւ նա չէր սխալոււմ:

Հազիւ թէ Մոնոմախը քիչ հանգստացաւ,
որ յիշեց Անի քաղաքի մասին, հրամայեց զըտ-
նել Յովհաննէս-Սմբատի յետկարը, նրա պատ-
ճէն պատրաստել տւաւ և պատգամաւորների
ձեռքով ուղարկեց հայոց թագաւորին:

— Տուր Անին—հրամայեց ասել նա—այդ
քաղաքը և նրան շրջապատող երկիրները յունա-
կան պետութեանն է տւած հօրեղբօրդ, իշխաննե-
րի և կաթողիկոսի համաձայնութեամբ: Պարտա-
ւոր ես յարգել պայմանը, եթէ չես կամենում
որ իզուր արիւն թափւի:

Գագիկը խորունկ տխրութիւնով կարգաց
խայտառակ յետկարը, ընդունեց պատգամաւոր-
ներին և այսպէս պատասխան ուղարկեց կայսրին.

— Ասէ՛ք մեծ՝ կայսրին, որ ես նրա ծառան
եմ և հպատակը, սակայն տալ նրան մեր երկի-
րը և մեր մայրաքաղաքը, դարձնել նրանց որ-
պէս Յունաստանի մի մասը—ես չեմ կարող: Ո՛չ
ես, ո՛չ կաթողիկոս և ո՛չ որևէ իշխան: Երկիրը
ժողովրդինն է և մենք ամենքս ժողովրդի պաշ-
տօնեաները:

Մոնոմախ կայսրը գտաւ որ իրաւացի էր

Գազիկը և բանակ կազմեց ուղարկել խելու ժողովրդից՝ նրան ընծայած երկիրը:

Այստեղ իհարկէ ընծայաբերութիւնը լոկ մի պատուակ էր: Իսկութիւնը այն էր որ յունական պետութեան քաղաքական ապահովութեան համար՝ անհրաժեշտ էր Հայաստանը ունենալ և նրան պարբնական դարձնել թաթարների արշաւանքների դէմ:

Յունական բանակը որ մտաւ նորից Հայաստան, սկսեց դարձնել սանձարձակ ասպատակութիւններով: Երկիրը էլի ոտնատակ գնաց, դաշտերը ամայացան, արիւնահեղութիւնը ծայր առաւ և դադարեց առևտուրն ու արդիւնաբերութիւնը:

Հայրենիքը վտանգի մէջ յայտարարեց. հայոց ամբողջ ոյժը ոտքի ելաւ և Գազիկը մի անգամ ևս նրա գլուխը անցած՝ ջարդեց յունական բանակն ու դուրս քշեց երկրից:

Այսորի գայրոյթը մեծ եղաւ, երբ այդ լըսեց: Նորից մի ուրիշ բանակ կազմեց և նոր հրամանատարի ձեռքով ուղարկեց Հայաստան: Այս նոր զօրավարը առաջարկեց Դինի պարսիկ իշխան Աբուսաւարին, որ նա ասպատակներով զբաղեցնէ հայերին, որպէս զի ինքը կարողանայ փշրել Գազիկի ոյժերը:

Աբուսաւարը կաշառւած, խոստում առած որ իր տիրելիք տեղերը իրեն պիտի թողնէին—մը-

տաւ Հայաստան և մի առ մի ձեռք ձգեց շատ ամբողջիւններ:

Դրութիւնը ծանրանում էր: Դժուար էր կրուել երկու թշնամու դէմ: Գազիկը ստիպւեց շատ ոսկի և լաւ ընծաներ ուղարկել Աբուսաւարին ու խնդրել որ նա հանգիստ թողնէ հայերին, հեռանայ:

Աբուսաւարը գոհ մնաց ընծաներից և հեռացաւ դնաց: Այն ժամանակ Գազիկը ընկաւ յոյների վրայ, ջարդեց նրանց, ցրիւ տաւ բանակը և մինչև յետին յոյն զինուորին դուրս վռնդեց երկրից:

Այս վերջին կռիւն ընթացքումն էր, որ Գազիկի մէջ կասկածներ ծագեցին, թէ իրեն շրջապատողների շարքերում դաւաճաններ կային: Մի քանի տարօրինակ փաստեր, ինչ որ մութ բաներ, պետութեան մի քանի գաղտնիքների մասին յոյների տեղեկութիւնը—այդ բոլորը անկասկած էր դարձնում, որ հայերից մատնիչներ կային և որ յոյներին Հայաստան հրաւիրող, նըրանց խոստումներ անող դաւաճաններ էին թագնւում արքունիքում:

Եւ երիտասարդ թագաւորի առաջին կասկածը ընկաւ Վեստ-Սարգսի վրայ: Հրամայեց յանկարծ բռնել նրան և բերել իր մօտ: Սարգիսը զարհուրեց, երբ Գազիկը սպառնաց կախել տալ նրան: Նախ սաստիկ շփոթւեց, բայց շու-

տով ոյժերը ժողովեց և այնպէս լաւ պաշտպանեց իրեն, այնքան յաջող փաստեր տաւ իր անմեղութեան, որ թագաւորը համոզւեց:

Այդ բաւական չէր, Վեստ Սարգիսը օգտուեց հանգամանքից և սկսեց ամբաստանել իր ոխերիմ թշնամի Գրիգոր Պահլաւունուն և յայտարարեց որ նա պիտի լինէր յոյներին հայերի դէմ գրգռող, քանի որ նա միայն յարաբերութեան մէջ էր Կ. Պօլսի հետ:

Եւ յիրաւի, ամբաստանութիւնը կարող էր կասկած ազդել, քանի որ ամենքը գիտէին թէ Գրիգոր Պահլաւունին մանկութիւնից կրթւել էր և մեծացել Յոնաստանում, ունէր շատ ծանօթներ յոյն մեծամեծների և գիտնականների մէջ և անընդհատ թղթակցում էր նրանց հետ:

Հաստատել ու հասկացնել որ այդ թղթակցութիւնները կրում էին անձնական բարեկամութիւն և գիտական բնաւորութիւն—գժւար էր: Վեստ-Սարգիսը այնքան լաւ ամբաստանեց, նոյն ամբաստանութիւնը այնքան լաւ կրկնեցին նրա համախոհներն և, որ երիտասարդ թագաւորը հաւատաց և սկսեց հալածել խեղճ գիտնականին:

Գրիգոր Պահլաւունին դառնացած, թողեց Արարատը, նախ գնաց Տարօն ապրելու, բայց այնտեղից էլ հալածւելով, ստիպւեց գնալ Յուստան:

Այլևս նա իր հայրենիքը չը տեսաւ. բայց Կ. Պօլսում մեծ պատիւներ վայելեց իր գիտնականութեան շնորհիւ և կայսրից ստացաւ մագիստրոսութեան բարձր տիտղոսը:

Վագիկը լսեց այդ ամենը. և այլև համոզւած որ յիրաւի Գրիգոր Մագիստրոսը դաւաճան էր, գրեց նրան յանդիմանական մի խիստ նամակ: Մագիստրոսը թէ իր թագաւորին և թէ ուրիշների՝ պաասսխանեց ամբաստանութեան մասին, արդարացրեց իրեն, սակայն Վեստ-Սարգիսը իր խորամանկ և քսու բնաւորութեամբ միշտ պղտորած պահեց թագաւորի միտքը Գրիգորի վերաբերութեամբ:

Այդ Սիւնեցի իշխանը, առհասարակ, Գրիգոր Պահլաւունու հեռանալուց յետոյ, աւելի համարձակութիւն ստացաւ արքունիքում, յաջողւեց շատ աւելի մօտ մարդ դառնալ անփորձ թագաւորին և այդպիսով ունեւի հեշտութեամբ դաւել նրան:

Պահլաւունիներին հեռացնելուց յետոյ, Վեստ Սարգիսը սկսեց թշնամութիւն սերմանել թագաւորի և կաթողիկոսի, նախարարների և թագաւորի, թյլ և ազդեցիկ իշխանների՝ միմեանց միջև: Որտեղ որ կարողացաւ—երկպառակութիւնը աճեցրեց, միմեանց դէմ հանեց ամենքին և ամենքին՝ թագաւորի դէմ:

Այդպիսով սկսեցին այն դէպքերը, որոնք

պիտի վերջնական հարւածը տային Հայաստանի անկախութեան և դէպի արագ անկումը մղէին Բագրատունեաց իշխանութիւնը:

8.

Միմեանց դէմ հանելուց յետոյ թագաւորին և կաթողիկոսին, նախարարներին և Գաղիկին, Վեստ-Սարգիսը հրճանքով գրեց յունաց կայսրին և իմաց տւաւ նրան իր գործունէութիւնը:

— Այժմ յարմար ժամանակն է—ասում էր նա— մի փոքրիկ ջանք ևս և հայոց աշխարհը քոնն է. բոլոր նախարարները, նոյն իսկ կաթողիկոսը թշնամի են թագաւորին և ես կաշխատեմ որ նրանք համաձայնեն մեր երկիրը յանձնելու քեզ:

Այդպէս էլ նա արաւ: Ծածուկ ճարտար պատգամաւորներ, քաղցրախօս, համոզող մարդիկ ուղարկեց նախարարներից նրանց, որոնք շատ էլ գոհ չէին թագաւորից, և խոստանալով շատ արտօնութիւններ, յորդորեց միանալ իրեն և Անին յոյներին տալ:

Չափազանց ընկել էր հայ ազնւականութիւնը այդ ժամանակ: Ինչպէս ամեն ազնւականութիւն, վատասերւել էր նա զգւելի լինելու չափ: Ո՛չ մի կամք, ոչ մի աշխոյժ ու ազնւութիւն, կորցրել էին ամեն լաւ յատկութիւն. միայն ու-

տել, խմել և հանգստութիւն—ահա նրանց երազը: Եւ այդ էր նրանց վաժապը, որ համաձայնւեցին միմեանց մէջ ու որոշեցին ոչ միայն Անին, այլև ամբողջ աշխարհը յոյներին տալ և կայսեր հովանու տակ՝ վայելել իրենց կալածներն ու հարստութիւնը:

Համաձայնութիւնը կայացնելուց յետոյ, Վեստ-Սարգիսը և նախարարները ժողովեցին թագուն և Կոստանտին Մոնոմախին գրեցին այսպիսի մտքով մի նամակ.

— Տալիս ենք Անին և երկիրն ամբողջ քեզ—ասացին նրանք.—Այս անգամ դիմադրութիւն գրէթէ չի լինիլ, եթէ մի կերպով յաջողւի քեզ Գաղիկին տանել Կ. Պօլիս՝ սիրոյ և հաշտութեան համար իբր թէ: Բռնիր նրան այդտեղ և նա թող այլևս չը տեսնի իր հայրենիքի երեսը: Իսկ երբ զայ քո մեծութեան զօրքը այստեղ, մենք կը յանձնենք նրան երկիրը և բոլորս կը դառնանք քո հպատակները...

Կայսրի ուզածն էլ հէնց այդ էր: Նա իսկոյն մի սիրալիր նամակ գրեց Գաղիկին և հրաւիրեց նրան Կ. Պօլիս գալ, խոստանալով հաշտութիւն և մշտական բարեկամութիւն: Մինչև անգամ թէ նամակով և թէ ուղարկւած պատգամաւորների բերնով յայտնեց իր երզումը խաչի և աւետարանի վրայ, որ մտադիր է նա այլևս վերջ դնել ամեն թիւրիմացութեան՝ երկու քրիս-

տոնեայ ազգերի միջև, վճռել է Անին ընծայող թուղթը ոչնչացնել և եղբայրական ձեռք պարզել հայոց թագաւորին:

Գազիկին տխրեցրեց այդ նամակը: Նա ոչ միայն չը հաւատաց խոստումներին, երգմանը և պատգամաւորների համոզիչ խօսքերին, այլ ըզգաց որ սիրտը սեղմւում է և որ այդ հրաւէրը ունենալու է ճակատադրական հետևանք Հայաստանի համար:

Միւս կողմից նա լսւ էր ճանաչում յոյներին, գիտէր նրանց խոստումների, բարեկամութեան և նոյն իսկ երդումների արժէքը: Ճանաչում էին յոյներին նաև բոլոր հայերը. ճանաչում էին վաղուց, դեռ ևս հինգերորդ, վեցերորդ դարերիցն սկսած՝ իրենց պապերից ժառանգութիւն ստացած լինելով հաւատ չընծայել յունականն ոչ մի խոստման, ոչ մի երդումին:

Եւ Պահլաւունիներն, ու թագաւորին, երկրին բարեացակամ իշխանները պնդեցին որ հայոց թագաւորը չը պիտի հեռանար երկրից և մանաւանդ, չը պիտի ոտ կոխէր յունաց մայրաքաղաքը:

Բայց Վեստ-Սարգիսն ու յոյներին երկիրը ծախել որոշող նախարարները չը մնացին պարապ: Եկան նրանք թագաւորի մօտ, առնելով իրենց հետ Պետրոս կաթողիկոսին և բարձր կրօնաւորութեան:

— Ինչից ես վախենում, արքայ, համոզեցին նրանք շողորթով լեզուով. ինչից ես վախենում որ չես ուզում գնալ: Իզուր ինչո՞ւ ես աւելի թշնամացնում մեզ յունաց զօրեղ կայսրի հետ: Մենք այլևս ոյժ և կարողութիւն չունինք պատերազմները շարունակելու. յանուն ժողովրդեան՝ երկրին հարկաւոր է խաղաղութիւն: Ահա կայսրը առաջարկում է մեզ ոչ միայն հաշտութիւն, այլև բարեկամութիւն... Եթէ կասկածում ես որևիցէ բանից, ահա մենք պատրաստ ենք մեր անձը դնել քեզ և մեր աշխարհի համար:

Այս և այսպիսի յորդորական խօսքերով համոզում էին նրան ընդունել կայսեր հրաւէրը: Գազիկը թէև չը համոզւեց, բայց զգաց որ յամառելը անօգուտ էր և որ ազնւականութեան մեծամասնութիւնը կրօնաւորութեան հետ՝ ուզում էր նրա գնալը:

Սակայն յայտնեց իր կասկածը, որ իր գնալուց յետոյ այդ նոյն ազնւականութիւնը կարող էր Անին և երկիրը յանձնել յոյներին:

Այն ժամանակ Պետրոս «հրաշագործ» կաթողիկոսը առաջարկեց երգել հաղորդութեան վրայ, որ ինքն ու ազնւականութիւնը կը պաշտպանեն երկիրը և չեն տալ օտարի ձեռքը:

Եւ ահա կատարեց նմանը դեռ չը տեսնւած մի երդում: Բերին եկեղեցուց նոյն օրւայ

պատարագի հաղորդութեան սկիհը, նախ երգեցին նրա վրայ, իսկ յետոյ, պատրաստելով մի խոստմնագիր, փետուրէ գրիչը թաթախեցին հաղորդութեան գինիի—Քրիստոսի արիւնի—մէջ և նրանով ստորագրեցին ամենքը:

Մի այգպիսի երգումից և ստորագրութիւնից յետոյ՝ Գազիկը գրեթէ ապահովեց, զուլսը խոնարհեց և ճանապարհ ընկաւ դէպի Կ. Պօլիս:

Ճնշած սրտով, լի դառնութեամբ, տխուր և արտասուլից՝ ելաւ նա իր մայրաքաղաքից: Միրտը սեղմուած էր, երբ անցնում էր հայրենիքի քաղաքներից ու գիւղերից և երբ մնում էին ետ երկրի դաշտերն ու լեռներն, որոնց նա այլևս երբէք, երբէք չէր տեսնելու:

Եւ երբ վերջին գիւղիցն էլ հեռանում էր, դարձաւ, նայեց շքեղ ձորերին ու լացաւ:

Հացաւ երիտասարդ թագաւորը, որ իր չորս տարուայ թագաւորութեան ընթացքում այնքան սիրել էր երկիրը և ժողովուրդը, և այժմ թողնում էր նրանց՝ վատասերւած, ապիկար ազնւականութեան, անբարոյականացած կրօնաւորութեան ձեռքը, համոզւած՝ թէ ոսկու և մի քանի տարւայ սարկական հանգստութեան համար պիտի ծախէին նրանք երկիրը օտարին:

Եւ գնաց: Արարատեան աշխարհը, բուն Հայաստանը իր վերջին հայ թագաւորին էր ճանապարհ դնում երկրից դուրս, նրա հետ օտար

երկրների մէջ թաղելու համար ընդ միշտ իր անկախութիւնը, անդորրութիւնը և քաղաքական ուրոյն կեանքը:

9.

Կ. Պօլսում կայսրը Գազիկին ընդունեց նախ արքայաւայել պառիւններով, իսկ յետոյ, երբ անցել էին առաջին օրերը, գրեց նրա առաջ Յովհաննէս-Սմբատի թուղթը, պահանջեց Անին և առաջարկեց տալ փոխարէնը փոքր Ասիայի Մալաթիա քաղաքն ու գաւառը, որպէս մշտական բնակութեան տեղ հայոց թագաւորի համար:

Երիտասարդ իշխանը միմիայն դառն կերպով ժպտեց, տեսնելով թէ ինչպէս է կատարում կայսրը իր երդումը, խոստումը, այլև, բարակամութեան ու հաշտութեան՝ գործը:

Ժպտեց և կտրականապէս մերժեց առաջարկը: Կայսրը բարկացաւ, հրամայեց նրան տանել մի կզզի և այնտեղ արգիլեց նրան:

Իսկ երբ լուր հասաւ Հայաստան թէ Գազիկն այլ ևս կալանաւոր է, ընդհարում առաջ եկաւ նախարարական երկու կուսակցութիւնների միջև: Իրարանցումն սկսեց: Վեստ-Սարգսեանները պնդում էին, որ պէտք էր երկիրը կայսրին յանձնել. Պահլաւունները առաջարկում

էին կուլի պատրաստուել և երկիրը ոչ ոքի չը տալ: Եղան, որ կամեցան Աղւանից Դաւիթ Անհողին կանչել. ոմանք նոյն իսկ առաջադրեցին Ափխազների թագաւոր Բագարատի ձեռքը տալ Հայաստանը, մի քանիսներն էլ—Դւինի պարսիկ իշխան Աբուսփարին:

Մինչ այդ, Հայաստան էր մանում յունական մի բանակ ներքինի Պառակամոնոսի առաջնորդութեամբ և գալիս էր Անին գրաւելու:

Զօրքն ու ժողովուրդը դեռ հաստատ չը գիտէին թէ Գագիկը չը պիտի վերադառնար: Դրա համար էլ, գրգռած Պահլաւունիներից և երկրին բարեկամ իշխաններից, նրանք միահամուռ ոյժով յարձակեցին յունական բանակի վրայ և այս անգամ ևս ջարդ ու փշուր արած՝ փախցրին բոլորովին:

Վերջին կռիւն էր դա. ոչ քաջալերութիւն պատճառեց նա և ոչ էլ յոյսեր տալ: Ոյժերը սպառուում էին, երկպառակութիւնը մեծանում էր, նախարարներից շատերը այլևս Վեստ-Սարգսի կողմն էին անցնում, և հաստատուում էր Գագիկի չը վերադառնալու լուրը:

Երբ հայոց զօրքը և ժողովուրդը հաստատ իմացան թէ իրենց թագաւորը երբէք չի վերադառնալու, երբ տեղեկացան կրօնաւորութեան և ազնականութեան նենգութիւնների մասին— ժողովեցին առ հասարակ՝ հայոց թագաւորների

գերեզմանատանը և այնտեղ լացին հայ ազգի անաէրութեան վրայ:

Ողբը ի՞նչ կարող էր անել. զօրքը լքած էր և ազնականութեան լաւագոյն մասը յուսահատ թողել հեռացել էր: Ասպարէզը Վեստ-Սարգսին էր մնում, Պետրոս կաթողիկոսին և թուլամորթ նախարարներին:

Եւ դրանք էլ միացած, յունական զօրապետին լուր ուղարկեցին, թէ յանձնելու պատրաստ են Անին և երկիրը:

Պատգամաւորների և կայսրին ուղղած համակի հետ Պետրոս կաթողիկոսը յանձնեց մայրաքաղաքի բանալիներն ու խնդրեց իր վարձատրութիւնը:

Ամենքը վարձատրեցին: Հայրենիքը ծախելու գինը խղճմտանքով վճարեց նրանց և Հայաստանը դարձաւ յունական պետութեան մի կուսակալութիւն:

Իսկ ի՞նչ եղաւ Բագրատունեաց վերջին թագաւորը, թշառ Գագիկ երկրորդը:

Կայսրը տաւ նրան Կապադովկիայում մի քանի գաւառներ, որոնց մէջ յուսահատ իշխանը թափառում էր անհանգիստ, առանց կարողանալու մի տեղ նստել:

Պատմութիւնը թողել է մեզ նրա այդ անպերջանիկ կեանքից մի քանի բան և նրա տխուր մահւան նկարագիրը:

Պանդխտութեան մէջ մօտ 33 տարի, առանց կարողանալու իր հայրենիքը մի անգամ գոնէ տեսնել, ականատես էր թէ ինչպէ՞ս յոյները արհամարանքով էին վարւում հայերի հետ, թէ որքան նախատում էին նրանց, որքան ստորացնում... Միւս կողմից նրա ականջին էին հասնում երկրի անվերջ աղէտները...

Օհ, իր թշւառ երկիրը: Հանգիստ կեանք չունէր այլևս: Յոյները, ճշմարիտ է տիրել էին նրան, բայց պողպատէ ճանկերի մէջ էին առել ժողովրդին և անգթօրէն ճգմում էին, կեղեքում, հարստահարում և զծուծ միջոցներով ստորացնում անխնայ...

Դրա վրայ աւելանում էին և այն, որ Տուգրիլ բէգը, նրա յաջորդ Արփաալանը միմեանց ետևից, մի քանի անգամ մտան Հայաստան, քանդեցին և աւերեցին շարունակ եօթը տարի, տառնեակ հազարներ մորթեցին, արիւնի ծով գոյացրին...

Եւ այս ամենը լսում էր Գագիկը, զայրանում էր, քիչ էր մնում գնար Պարսկաստան, դիմէր մահմեդական թագաւորի օգնութեան՝ իր երկիրը ազատելու համար, բայց հսկողութիւնը խիստ էր, կողմնակիցներ չունէր և զգում էր,

որ այլևս անընդունակ է որևէ մեծ ձեռնարկի: Եւ թափառում էր իր փոքրիկ շրջանակի մէջ, թափառում ու իր մաղձը թափում յոյների վրայ, որոնք նրա աչքի առաջ նախատում էին հայերին, հայհոյում և ամեն կերպ ստորացնում...

Պատմւում է, որ մի օր էլ լսեց թէ Կեսարիայի Մարկոս միտրապօլիտը իր շան անունը դրել էր Արմէն (Հայ), որպէս չափազանց նախատական նշան՝ ուղղւած հայ ազգին:

Զայրացած՝ առաւ նա իր հետ մի քանի հայ կաթիճների, գնաց միտրապօլիտի մօտ, բռնեց շանն ու կրօնաւորին, երկուսին էլ կոխել տաւ մի տոսրակի մէջ և այնքան ծեծեց շանը, որ սա կծոտեց ու ծլատեց իր տիրոջը:

Բայց Գագիկը յոյներին հաոցրած իբր պատիժների համար տուժեց վերջ ի վերջոյ:

Մի օր, երբ երեք հոգով անցնում էր յունական Կիզիստրա ամրոցի մօտով, բերդակալ Մանդալեան եղբայրները թագնւած խմբով յարձակեցին նրա վրայ, փախցրին թիկնապահներին և իրեն բռնելով՝ տարան բանտարկեցին:

Ճշմարիտ է, հայ սեպուհներից մի քանիները եկան պաշարեցին ամրոցը, բայց Մանդալէի որդիները մեծ տանջանքներով սպանեցին Գագիկին և մարմինը կախեցին պարսպից դուրս, հայ իշխանների աչքի առաջ:

Երբ պաշտպանելու եկող սեպուհները տեսան այդ, անօգուտ գտան այնուհետև կռիւ անելը. իրենց նախկին վեհապետի անարգական մահւան վրէժը գոնէ առնելու մոռացան և յոյսերի ծաղրի տակ՝ թողին հեռացան...

Այդպէս էր, որ մեռաւ բուն Հայաստանի վերջին թագաւորը:

Երկու օրդի թողեց նա: Երկուսին էլ քիչ յետոյ, զանազան տեղերում թունաւորելով՝ ըսպանեցին: Բազրատունեաց թագաւորական ցեղը նրանցով էլ իսպառ ջնջւեց:

Մինչ այդ՝ Հայաստանն էլ դատարկւում էր: Սրա-նրա ոտքերի տակ՝ նա անդորրութիւն չը գտաւ այլևս: Ժողովուրդը յուսաբեկ, չը կամեցաւ այնուհետև կպած մնալ մի հողի, ուր ոչ ցանել կարելի էր և ոչ էլ ապրել:

Եւ սկսեց ցրւել, խուսափել արիւնոտ հողից, աւերակներից ու անվերջ հալածանքից:

Թողին այլևս ամեն մշակութիւն, տուն ու տեղ, թողին վանք ու եկեղեցի, ինչ որ կարողացան՝ առին իրենց հետ և խումբ առ խումբ գնացին որոնելու աւելի ապահով անկիւններ:

Այդ անկիւններից գլխաւորները եղան Տաւրոսի լեռների բարձունքը, Սև-լեռների կուրծքը և մոայլ ժայռերի ծայրերը:

Այնտեղ, մշուշոտ լեռնադաշտերի լանջերի վրայ հետզհետէ ժողովւեցին ամեն կողմից փա-

խտականներ, տեղաւորւեցին ցեղ առ ցեղ, կամաց-կամաց համայնքներ կազմեցին, վարժեցին նոր կլիմային, ապրուստի նոր ձևերին և մի վերջին ճիգով աշխատեցին վերականգնել իրենց փշրւած կեանքը:

Գտնւեց Գագիկի ազգականներից մի իշխան, որ մի խումբ կտրիճների հետ հարթութիւններից ելաւ լեռները, միացրեց աեղական հայերին իր հետ, քշեց բոլոր յոյսերին այն տեղերից և սկիզբը դրաւ հայկական լեռնային մի նոր, անկախ իշխանութեան, Քրիստոսի 1080 թւականին, Գագիկի մահւանից մի տարի յետոյ:

Ռուբէն իշխանն էր այն, որ հիմնեց Ռուբինեանց իշխանութիւնը:



16. Հացահատիկների մարդային կուլտուրան
—Գ. Ղարազեօղեանի — „ 5 „
17. Ի՞նչ բան է գէմսովօն—Ի. Բեթօկօնսկոյ
(Թարգմանութիւն) — ր. 5 Կ.
18. Ինձ մի՛ խնդրիր—բժանա. խօսք Յ. Թու-
մանեանի, ներդաշնակութիւն Ա. Մայի-
ղեանի — „ 40 „
19. Ողբ Հայաստանի—գունատիպ նկար . . — „ 50 „
20. Արտաշէսի յուղարկաւորութիւնը—գունա-
տիպ նկար — „ 25 „

Պահեստը գտնուում է Միութեան գրասենեակում:

Հասցեն՝ Баку, Армянскій Культурный Союзъ.

ՏՊԱԳՐԻՈՒՄ ԵՆ ԴՐԻԱԳՆԵՐ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՅ

- № 3. Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ.
№ 4. Սահակ և Մեօրոպ.
№ 5—6. Վարդանանց պատերազմը.
№ 7. Վահան Մամիկոնեան.
№ 8. Թորոս Իշխան.
№ 9. Լևոն Երկրորդ:

301

4'

5719

2013

